ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«05» Դեկտեմբերի 2019թ. № 2/6345-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՍՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702–Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի թիվ 82/2019 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հարկային ծառայողի վարքագծի կանոնները խախտելու համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 6 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Հասմիկ Արայիկի Ավագյանի նկատմամբ կիրառել «բանավոր նկատողություն» կարգապահական պատասխանատվությունը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կ.Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ